ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF HISTORY

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА

АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE

JOURNAL OF ARMENIAN STUDIES

№ 2

ԵՐԵՎԱՆ - ЕРЕВАН - YEREVAN
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS
2021

Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ

Գլխավոր խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**

Խմբագրական խորհուրդ՝

Աշոտ Մելքոնյան (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆ.), **Արամ Սիմոնյան** (ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պ.գ.դ., պրոֆ.), **Ալբերտ Ստեփանյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Լևոն Չուգասզյան** (արվ.գ.դ., պրոֆ.), **Համլետ Պետրոսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Արման Եղիազարյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Հայրունի** (պ.գ.դ., պրոֆ.), **Վալերի Թունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Վանիկ Վիրաբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ռաֆիկ Նահապետյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հակոբ Հարությունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հովիկ Գրիգորյան** (պ.գ.թ., դոց.), **Մխիթար Գաբրիելյան** (պ.գ.թ., դոց.), **Էդգար Հովհաննիսյան** (պ.գ.թ., դոց.):

Главный редактор - докт. ист. наук, проф. **Эдик Минасян**

Редакционная коллегия:

Ашот Мелконян (академик НАН РА, д.и.н., проф.), **Арам Симонян** (чл.-кор. НАН РА, д.и.н., проф.), **Альберт Степанян** (д.и.н., проф.), **Айк Аветисян** (д.и.н., проф.), **Левон Чугасзян** (д. иск. н., проф.), **Гамлет Петросян** (д.и.н., проф.), **Арман Егиазарян** (д.и.н., проф.), **Айказ Оганесян** (д.и.н., проф.), **Ашот Нерсесян** (д.и.н., проф.), **Ашот Айруни** (д.и.н., проф.), **Валерий Тунян** (д.и.н., проф.), **Ваник Вирабян** (д.и.н., проф.), **Рафик Наапетян** (д.и.н., проф.), **Акоб Арутюнян** (д.и.н., проф.), **Овик Григорян** (к.и.н., доц.), **Мхитар Габриелян** (к.и.н., доц.), **Эдгар Оганнисян** (к.и.н., доц.).

Editor-in-Chief: Doctor of Sciences, Prof. **Edik Minasyan**

Editorial Board:

Ashot Melkonyan (Academician of NAS RA, Doctor of Sciences, Prof.), **Aram Simonyan** (Corresp. Member of NAS RA, Doctor of Sciences, Prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, Prof.), **Hayk Avetisyan** (Doctor of Sciences, Prof.), **Levon Chugaszyan** (Doctor of Arts, Prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences, Prof.), **Arman Yeghiazaryan** (Doctor of Sciences, Prof.), **Haikaz Hovhannisyan** (Doctor of Sciences, Prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, Prof.), **Asot Hayruni** (Doctor of Sciences, Prof.), **Valeri Tunyan** (Doctor of Sciences, Prof.), **Vanik Virabyan** (Doctor of Sciences, Prof.), **Rafik Nahapetyan** (Doctor of Sciences, Prof.), **Hakob Harutunyan** (Doctor of Sciences, Prof.), **Hovik Grigoryan** (PhD in History, Associate Prof.), **Mkhitar Gabrielyan** (PhD in History, Associate Prof.), **Edgar Hovhannisyan** (PhD in History, Associate Prof.).

ISSN 1829-2771

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
СОДЕРЖАНИЕ / CONTENT

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ / ИСТОРИЯ / HISTORY

Էդիկ Մինասյան - ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ 6

Эдик Минасян - АРМЯНО-ТУРЕЦКИЕ ОТНОШЕНИЯ В ГОДЫ НЕЗАВИСИМОСТИ РА ... 26

Edik Minasyan - ARMENIAN-TURKISH RELATIONS DURING THE YEARS OF INDEPENDENCE OF THE RA 28

Էդուարդ Զոհրաբյան - ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1930-1980-ԱԿԱՆ ԹԹ. 31

Эдуард Зограбян - ПРОЦЕСС ИДЕОЛОГИЧЕСКОЙ ТРАНСФОРМАЦИИ АРМЯНСКОГО ОБЩЕСТВА В СОВЕТСКОЙ АРМЕНИИ С 1930 ПО 1980-ЫЕ ГОДЫ 39

Eduard Zohrabyan - THE PROCESS OF IDEOLOGICAL TNANSFORMATION OF SOCIIETY IN Soviet Armenia in 1930-1980 39

Ֆելիքս Մովսիսյան - ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄԻՏՔԸ 1840-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԻՐԼԱՆԴԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՄԱՆ ՄԱՍԻՆ 40

Феликс Мовсисян - АРМЯНСКАЯ ОБЩЕСТВЕННАЯ МЫСЛЬ ОБ ИРЛАНДСКОМ НАЦИОНАЛЬНОМ ДВИЖЕНИИ 1840-Х ГОДОВ 57

Feliks Movsisyan - ARMENIAN PUBLIC OPINION ON THE IRISH NATIONAL MOVEMENT OF THE 1840s 57

Валерий Тунян - ПОБОРНИКИ ОТРИЦАНИЯ ГЕНОЦИДА АРМЯН 59

Վալերի Թունյան - ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՐԺՄԱՆ ՁԱՏԱԳՈՎՆԵՐԸ 64

Valery Tunyan - DEFENDERS OF THE DENIAL OF THE ARMENIAN GENOCIDE 64

Վանիկ Վիրաբյան - ԱԶԳԱՄԻՋՅԱՆ ՁԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԱՆՏԱՆՏԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ 1917 Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄԻՑ ՀԵՏՈ 65

Ваник Вирабян - МЕЖЭТНИЧЕСКИЕ СОБЫТИЯ И АНТАНТОВСКИЕ ГОСУДАРСТВА В ЗАКАВКАЗЬЕ ПОСЛЕ ОКТЯБРЬСКОЙ РЕВОЛЮЦИИ 1917 ГОДА 82

Vanik Virabyan - INTERETHNIC DEVELOPMENTS AND THE ENTENTE STATES IN TRANSCAUCASIA AFTER THE OCTOBER 1917 REVOLUTION 82

Սարգիս Գրիգորյան – ԱԴՐԲԵՋԱՆՑԻ ԻՍԼԱՄԱԿԱՆՆԵՐԻ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ ԵՎ ՄԵՐՁԱԿՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ 84

Саргис Григорян - АКТИВНОСТЬ АЗЕРБАЙДЖАНСКИХ ИСЛАМИСТОВ НА КАВКАЗЕ И БЛИЖНЕМ ВОСТОКЕ 91

Sargis Grigoryan – ACTIVITY OF AZERBAIJANI ISLAMISTS IN THE CAUCASUS AND IN THE MIDDLE EAST 92

Նառա Սարգսյան - ՀԱՄԻԴՅԱՆ ՁԱՐԴԵՐԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐՅԱՆԻ «ԿԱՐՄԻՐ ԺԱՄՈՒՑ» ՎԻՊԱԿՈՒՄ 93

Нара Саргсян – ОТРАЖЕНИЕ ПСИХОЛОГИЧЕСКОГО ВОЗДЕЙСТВИЯ ХАМИДИЙСКОЙ РЕЗНИ В ПРОИЗВЕДЕНИИ АРПИАР АРПИАРЯНА “БАГРОВОЕ ПРИНОШЕНИЕ” 101

Nara Sargsyan – THE REFLECTION OF PSYCHOLOGICAL INFLUENCE OF HAMIDIAN MASSACARES IN ARPIAR ARPIARYAN'S NOVELETTE "THE CRIMSON OFFERING" 101

Էդգար Չախոյան - Վրաստան-ԱՄՆ դիվանագիտական հարաբերությունները Միխեիլ Սաակաշվիլիի նախագահության առաջին շրջանում (2004-2007 թթ.) 102

Эдгар Чахоян – ДИПЛОМАТИЧЕСКИЕ ОТНОШЕНИЯ ГРУЗИИ И США ПРИ ПЕРВОМ ПРЕЗИДЕНТСКОМ СРОКЕ МИХАИЛА СААКАШВИЛИ (2004-2007 гг.) 112

Edgar Chakhoyan - DIPLOMATIC RELATIONS BETWEEN GEORGIA AND THE USA DURING THE FIRST PERIOD OF THE PRESIDENCY OF MIKHAIL SAAKASHVILI (2004-2007) 113

Арман Сафарян – О НЕКОТОРЫХ ОСОБЕННОСТЯХ КОНВЕРГЕНТНОЙ И МУЛЬТИМЕДИЙНОЙ ЖУРНАЛИСТИКИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ 114

Արման Սաֆարյան – ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՆՎԵՐԳԵՆՏ և ՄՈՒԼՏԻՄԵԴԻԱՅԻՆ ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ 118

Safaryan Arman – ON SOME FEATURES OF CONVERGENT AND MULTIMEDIA JOURNALISM IN THE REPUBLIC OF ARMENIA 118

Անդրանիկ Եսայան – ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀՅՈՒՍԻՍԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ XVIII Դարի ԱՌԱՋԻՆ ՔԱՌՈՐԴԻՆ 119

Андраник Есаян – СИТУАЦИЯ В СЕВЕРО-ВОСТОЧНОЙ АРМЕНИИ В ПЕРВОЙ ЧЕТВЕРТИ 18 ВЕКА 125

Andranik Yesayan – THE SITUATION IN NORTHEASTERN ARMENIA IN THE FIRST QUARTER OF THE 18-TH CENTURY 126

Տարոն Սաքոյան - ԹՈՒՐՔԻԱՅԻ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՇԱՀԵՐՆ ՈՒ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՈՐ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (2010-2016) ... 127

Тарон Сакоян - ИНТЕРЕСЫ И ПРОТИВОРЕЧИЯ ТУРЦИИ И РОССИИ НА ЮЖНОМ КАВКАЗЕ В НОВЫХ ГЕОПОЛИТИЧЕСКИХ РЕАЛИЯХ (2010-2016) 136

Taron Sakoyan - INTERESTS AND CONTRADICTIONS BETWEEN TURKEY AND RUSSIA IN THE SOUTH CAUCASUS IN NEW GEOPOLITICAL REALITIES (2010-2016) 136

Majid Karimi - THE ETIMOLOGY AND ORIGINS OF THE NAME NAKHICHEVAN FROM THE HISTORICAL SOURCES 137

Մաջիդ Քարիմի - ՆԱԽԻՋԵՎԱՆ ԱՆՎԱՆ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ և ԾԱԳՈՒՄԸ ԸՍՏ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ 147

Маджид Карими - ЭТИМОЛОГИЯ И ПРОИСХОЖДЕНИЕ НАЗВАНИЯ НАХИДЖЕВАН ПО ИСТОРИЧЕСКИМ ИСТОЧНИКАМ 147

Օֆելյա Դարբինյան - ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅԵՐԻ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ 148

Офелия Дарбинян - ОСОБЕННОСТИ РЕПАРТАЦИИ ЛИВИНСКИХ АРМЯН, РЕЗУЛЬТАТЫ И ПОСЛЕДСТВИЯ (1946-1949 ГГ.) 158

Ofelya Darbinyan - PECULIARITIES, RESULTS AND CONSEQUENCES OF THE REPATRIATION OF THE LEBANESE-ARMENIANS (1946-1949) 158

Արևշատ Մինասյան - ՈՒՐՈՒԳՎԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ 159

Аревшат Минасян - АРМЯНСКАЯ ОБЩИНА УРУГВАЯ 164

Arevshat Minasyan - THE ARMENIAN COMMUNITY OF URUGUAY 164

Միքայել Միքայելյան - ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԱՏԹԵՈՍ II ԻԶՄԻՐԼՅԱՆԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՌՈՒՍԱՑ ԿԱՅՍՐ ՆԻԿՈԼԱՅ II-Ի ՀԵՏ 166

Микаел Микаелян - ВСТРЕЧА КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН МАТТЕОСА II ИЗМИРЛЯНА С РОССИЙСКИМ ИМПЕРАТОРОМ НИКОЛАЕМ II 172

Mikayel Mikayelyan - MEETING OF CATHOLICOS OF ALL ARMENIANS MATTEOS II IZMIRLYAN WITH RUSSIAN EMPEROR NICHOLAS II 172

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ / АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ / ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

Սամվել Մկրտչյան - ԷԹՆԻԿ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅՈՑ ՏՈՆԱԾԻՍԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՈՒՄ 173

Самвел Мкртчян – ПРОЯВЛЕНИЕ ЭТНИЧЕСКОЙ ИДЕНТИЧНОСТИ И ИСТОРИЧЕСКОЙ ПАМЯТИ В АРМЯНСКОЙ ПРАЗДНИЧНООБРЯДНОЙ КУЛЬТУРЕ 178

Samvel Mkrtchyan - MANIFESTATIONS OF ETHNIC IDENTITY AND HISTORICAL MEMORY IN THE ARMENIAN FESTIVAL AND RITUAL CULTURE 178

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ / УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЙ / EDUCATIONAL-METHODOLOGICAL

Մերի Հովհաննիսյան - ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 180

Мери Оганнисян - *ОСОБЕННОСТИ ПРОЕКТНОГО ОБУЧЕНИЯ* 186

Meri Hovhannisyan - PECULIARITIES OF PROJECT-BASED LEARNING 186

ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔ

ԳԻՏԱԺՈՂՈՎ ՆՎԻՐՎԱԾ ԱՆՎԱՆԻ ՊԱՏՄԱԲԱՆ ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ .. 188
ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ՊԱՏՄԱԲԱՆԻ ՕՐՎԱՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀՆԳՕՐՅԱ ԳԻՏԱԺՈՂՈՎԸ 190
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ՀԱՅՐԱՊԵՏ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ 192

ՄԵՐ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐԸ

НА ПЕРЕКРЕСТКЕ ИСТОРИЧЕСКИХ И ЕСТЕСТВЕННЫХ НАУК 194

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 196
INFORMATION ABOUT THE AUTHORS 197

«ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ» ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ՀԱՐԹԱԿՈՒՄ ԳՐԱՆՑՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ 198

Անդրանիկ Եսայան

ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀՅՈՒՍԻՍԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ XVIII ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՌՈՐԴԻՆ

Հիմնաբառեր. հյուսիսարևելյան Հայաստան, Զակամ, Տավուշ, լեզգիներ, Գանձակ, Սեֆյան Իրան, Ղազախ, Շամշադին, Չարեք, Վախթանգ:

Պարսկա-օսմանյան պատերազմներից հետո XVII դարի 30-ական թվականներից հյուսիսարևելյան Հայաստանում խաղաղ շինարարության ու տնտեսական զարգացման բարենպաստ միջավայր էր ստեղծվել: Արդյունքում Հայաստանի այլ վայրերից այստեղ նկատվեց բնակչության որոշակի ներգաղթ: Աշխուժացավ խաթարված հոգևոր հաստատությունների գործունեությունը: Կառուցվեցին նոր վանքեր ու եկեղեցիներ: Իրավիճակը փոխվեց, երբ դարավերջին Սեֆյան տերությունը սկսեց թուլանալ: Պետության կործանումը կանխելու նպատակով իրանական արքունիքը ավելի ծանր հարկեր սահմանեց, որն ավելի անտանելի դարձրեց բնակչության վիճակը: Առիթից շտապեցին օգտվել իրանական տարածքներին հավակնող Թուրքիան ու հզորացող Ռուսաստանը: Թուրքերի հրահրմամբ հյուսիսարևելյան Հայաստանի բնակավայրերը զուգահեռաբար սկսեցին ավարառության ենթարկվել լեզգիների կողմից: Լեռնականների զորախմբերը պարբերաբար սկսեցին անցնել Կուր գետը և ամայացնել հայկական բնակավայրերը: Օսմանյան կայսրությունը, ռուսական կողմի հետ համաձայնեցված, 1725 թ. կարողացավ գրավել ամբողջ տարածաշրջանը: Նշված իրադարձություններն մեծապես ազդեցին տարածաշրջանի ժողովրդագրական պատկերի վրա, ինչի հետևանքները զգացվեցին նաև հետագա տարիներին:

Հյուսիսարևելյան Հայաստանում XVII դարի 30-ական թվականներից խաղաղ շինարարության և տնտեսական զարգացման բարենպաստ պայմաններ էին ստեղծվել: Հին բնակավայրերը սկսեցին ավելի ընդլայնվել, հիմնադրվեցին նորերը: Կառուցվեցին նոր եկեղեցիներ ու հոգևոր հաստատություններ: Արարատյան դաշտավայրում ծավալված իրանա-օսմանյան կռիվների ընթացքում տեղի հայ բնակչության մի մասը նախընտրեց հեռանալ երկրի հյուսիսարևելյան շրջաններ. «Եւ ելին ի բնակութենէ իւրեանց և ցրուեցան՝ ոմանք՝ յաշխարհն Վրաց, ոմանք՝ յԱղուանս, ի Զակամ, ի Գեանձայ, ի Խաչեն, ի Վարանդ և այլ ուր և կարացին»[1]: Հետագա տասնամյակներում պարսկա-օսմանյան պատերազմների բացակայությունը բարենպաստ ազդեցություն ունեցավ տարածաշրջանի տնտեսական ու մշակութային զարգացման առումով: Ամփոփելով այս ամենը՝ Աղվանից Եսայի կաթողիկոսը նշում է. «...Շինեցան ամենայն աւերակ գեօղք և քաղաքք, և երկիր աշխարհիս Հայոց և Պարսից»[2]: Այս ամենի արդյունքում. «...առաւել խաղաղութիւն եղեւ աշխարհի և շինութիւն աւերակաց, և բազմամարդութիւն երկրի. ուղղութիւն և իրաւունք դատաւորաց, չափաւորութիւն հարկապահանջութեանց. և բարեկարգութիւն ամենայն գործոց և արարողութեանց»[3]:

XVIII դարասկզբին Հյուսիսարևելյան Հայաստանի գավառները մտնում էին Սեֆյան Իրանի Գանձակ-Ղարաբաղի բեկլարբեկության մեջ: Բեկլարբեկը երկրամասի փաստացի կառավարիչն էր: Գավառներում նրան ենթակա էին տեղական մահմեդական խաները և հայ մելիքները: Հյուսիսարևելյան Հայաստանում դեռևս շարունակում էին գոյատևել մի քանի հայկական մելիքություններ: Դրանցից առավել նշանավոր էին Շատախի, Կունենի, Տավուշի ու Միափորի մելիքությունները: Սակայն XVIII դարավերջին, երբ Սեֆյան Իրանում նշմարվեցին անկայունության ու թուլացման նշաններ, դրանից շտապեց օգտվել Սեֆյանների վաղեմի թշնամի Օսմանյան կայսրությունը: Պետրոս I-ի (1682-1725 թթ.) օրոք հզորացող և ծավալվող Ռուսաստանը ևս լուրջ աշխատանքներ էր տանում այսրկովկասյան տարածաշրջանը նվաճելու ուղղությամբ՝ փորձելով օգտագործել նաև տեղի հայ բնակ-

* Հոդվածը ներկայացվել է 15.11.2021 թ., գրախոսվել՝ 13.12.2021 թ., ընդունվել տպագրության՝ 30.12.2021 թ.:

[1] Զաքարիա Քանաքեռցի, Պատմություն, աշխատասիրությամբ Ա. Վիրաբյանի, Ե., 2015, էջ 95:

[2] Աղուանից կաթողիկոս Տ. Եսայի Հասան-Զալալեանց, Պատմութիւն համառօտ Աղուանից երկրի, (այսուհետև՝ Եսայի պատմիչ), Ստեփանակերտ, 2007, էջ 44:

[3] Նույն տեղում, էջ 45:

չությանը: Այս առումով հիշատակելի է նաև ցարական արքունիքի հետ ակտիվ շփումներ ունեցող Իսրայել Օրու գործունեությունը: Ռուսաստանը նաև ամեն կերպ փորձում էր իր կողմը գրավել նաև Իրանին ենթակա վրացական թագավորներին: Այս գործընթացների վրա ազդող մյուս գործոնը լեզգիներն էին: Նրանք, Շիրվանում մի քանի հաջող ավարառական արշավանքներ իրականացնելով, Օսմանյան Թուրքիայի աջակցությամբ[1] սկսեցին մշտական վտանգի ու քաոսի մեջ պահել Իրանի հյուսիսային սահմանները:

Սեֆյան շահ Սուլթան Հուսեինի (1694-1722 թթ.) օրոք հարկերն ավելի ծանրացվեցին: Իրանի տնտեսական և հարկային քաղաքականությունը բնույթով հնացած էր, և արդեն 17-րդ դարի կեսերին ի հայտ եկան բազմաթիվ խնդիրներ, որոնց լուծումը սեֆյան արքունիքը տեսնում էր նորանոր հարկեր ներմուծելով[2]: Շահ Հուսեինը 1699-1702 թթ. անցկացրեց աննախադեպ մի աշխարհագիր[3], որն ուղեկցվում էր հալածանքներով ու բռնությամբ: Հարկեր են սահմանվում նաև եկեղեցականների ու վանքերի վրա. «Իսկ անդ եդին հարկս ի վերայ գրելոց գլխոցն՝ երեքապատիկ յաւելմամբ ի վերայ առաջնոյ սահմանին. և ի վերայ եկեղեցական պաշտօնէից որ յառաջնումն ոչ երեւէր բնաւ, տասնապատիկ առաւել քան աշխարհականաց ծանր բեռինս եդին...»[4]:

Հյուսիսարևելյան Հայաստանի գավառներում հարկահանության գործընթացը իրականացնում է մեծ վեզիր Միրզաթահիրը, որն 1100 հոգանոց իր խմբով իրագործեց Արցախի և հյուսիսարևելյան Հայաստանի մնացյալ գավառների հարկահանությունը[5]:

Տերության կառավարման լճացած համակարգը նույնպես թուլացել էր: Սովորական բնույթ էին կրում կաշառքով զանազան պաշտոնների նշանակվելը, և պաշտոնյաների արագ փոփոխությունները[6]:

Ծայրագավառներում իրենց ցեղերով հաստատված խաներն ու բեկերը տեղերում սկսել էին իրենց ավելի ընդարձակ իրավունքներ վերապահել՝ անտանելի դարձնելով հայ բնակչության կյանքը: Վարելով հիմնականում քոչվոր կյանք՝ նրանք հետզհետե յուրացնում էին նորանոր տարածքներ՝ տեղի բնակչությանը ստիպելով հեռանալ՝ որոնելու նոր բնակավայրեր:

Կենտրոնական իշխանությունը հատկապես ծայրամասային նահանգներում սկսել էր ձևական բնույթ ունենալ: Նման պայմաններում Իրանի տարբեր վայրերում բռնկվում են ապստամբություններ: Այս անցքերը համընկնում էին Հայաստանի ազատագրության ծրագիրը շրջանառության մեջ դրած Իսրայել Օրու գործունեության հետ: Ղարաբաղում նրա համախոհն էր Եսայի կաթողիկոսը:

Օգտվելով Սեֆյան տերության հոգեվարքից՝ լեզգիները 1712 թ. Սուրխայ խանի և Հաջի Դավութի գլխավորությամբ հարձակվեցին Շամախի քաղաքի վրա: Ավերին ու կողոպուտին զոհ դարձան նաև մոտ 300 ռուս առևտրականներ: Հետագա հետևանքներից վախենալով՝ լեզգիների առաջնորդները աջակցություն ստանալու խնդրանքով դիմեցին Օսմանյան Թուրքիային: Ահմեդ III (1703-1730 թթ.) սուլթանի հատուկ ֆիրմանով Հաջի Դավութը նշանակվեց Շիրվանի կառավարիչ, իսկ Սարու Մուստաֆա փաշային հանձնարարվեց անհրաժեշտության դեպքում զինված օգնություն ցուցաբերել լեզգիներին[7]: Թուրքիան, նպատակ ունենալով նվաճել երկրամասը և խոչընդոտել տարածաշրջանում Ռուսական կայսրության առաջխաղացումը, օժանդակում էր լեզգիներին՝ միաժամանակ սպասելով բացահայտ ռազմական ներխուժման հարմար առիթի:

Լեզգիների արշավանքները գնալով սկսեցին պարբերական դառնալ: Միաժամանակ ընդլայնվեցին նրանց ավարառության սահմանները: Այս արշավանքներից խիստ տուժեցին հայկական բնակավայրերը: Կուրի ձախափնյա շրջաններն ասպատակելով լեռնականներն անցնում էին գետը և ամայացնում Արցախն ու հյուսիսարևելյան Հայաստանի գավառները: Եսայի կաթողիկոսի վկայությամբ. «Եւ այսպէս գրգռեալ ամ յամէ ասպատակ սփռեալ յայս կողմ և յայն կողմ Կուր գետոյն յերկրին Շաքուայ և Ղապալու և Գասանու նահանգին մինչեւ մերձ ի Շամախի քաղաք: Իսկ յայսմ կողմանէ յոլովք ի նահանգէն Ղազախու, որ է Ախստեվու՝

[1] Бакиханов А. К., Гюлистан-и Ирам, Баку, 1991, с. 63.

[2] Rudi Matthee, Persia in Crisis, Safavid Decline and the Fall of Isfahan, Chapter 4, Monetary Policy and the Disappearing Mints, 1600-1700, London, 2012, pp. 75-108.

[3] Եսայի պատմիչ, էջ 45:

[4] Նույն տեղում, էջ 46:

[5] Եսայի պատմիչ, էջ 46:

[6] Եսայի պատմիչ, էջ 47:

[7] Бакиханов А. К., Гюлистан-и Ирам, Баку, 1991, с. 63.

և ի երկրէն Ամիրշամ Շատինլուէն որ են Զակամներն»[1]: Կաթողիկոսի վկայությունից ստացվում է, որ Աղստևի հովիտը, Տավուշը, Վերին և Ներքին Զակամները ծանր վնասներ են կրել: Այստեղից լեզգիները անցել են Քարթլի. «1712 թ... լեզգիներն ավերում էին Քարթլին, Ղազախը, Շամշադինը, Ղարաբաղը և Շիրվանը:»[2]: Լեռնականների արշավանքներից տուժում էին նաև Գանձակի շրջակայքի հայկական գյուղերը. «Նաև չորս գետն Գանջապասանու՝ այսինքն Շամքոռ, Գանջապասան, Ոսկանապատու ձորն, և Քուրաքպասան այլ և յոլովք ի գիւղօրէիցն Պարտայու, և զդաշտավայր գիւղօրայսն միա-հաղոյն կոտորեալ, գերի և աւարի առեալ ամայի արարին, և զմնացեալսն փախստեայ ի լերինս և ի գարանձաւս Արցախու, և իւրաքանչիւր հանդէպ ամուր տեղիսն զերծեալք զապրուստ իւրեանց հոգային»[3]:

Լեռնականների հրոսակախմբերը, իրենց հանդիպած բոլոր բնակավայրերն ավերելով ու թալանելով, հասել են մինչև Սևանա լճի շրջակայք[4]: Բնակչության մի մասը տարվում էր ստրկության վաճառվելու, իսկ լեռներում և այլ անվտանգ վայրերում ապաստանած բնակչությունը ծանր զրկանքների գնով մի կերպ պահպանում էր գոյությունը: Տեղական ցեղապետերը, որոնք, փաստորեն, Սեֆյան Իրանի պաշտոնյաներ էին, անկարող եղան լեզգիների դեմ արդյունավետ դիմադրություն կազմակերպել: Եղան առանձին անհաջող փորձեր: Այսպես, Շամախու Հասան խանը մեծաքանակ զորքով հետապնդում է լեզգիներին, սակայն վերջիններս հանկարծակի հարձակումով ջախջախում են նրանց, իսկ խանը սպանվում է[5]: Լեզգիների ձեռքն է անցնում մեծ ավար[6], սակայն նրանք դրանով չեն բավարարվում: Այս հաղթանակից հետո լեզգիները հերթական անգամ անցնում են հյուսիսարևելյան Հայաստանի գավառների ամայացմանը: Տեղական խաները, ամենայն հավանականությամբ աչքի առաջ ունենալով Հասան խանի անփառունակ պարտությունը, նախընտրում են ապավինել անվտանգ վայրերին՝ երկրամասը թողնելով անպաշտպան: Մինչ լեզգիները ասպատակում էին Շամքորի հայկական գյուղերը, երկրամասի բեկլարբեկ Ուղուրլու խանը մազապուրծ փախավ Գանձակ[7]: Շամքորի հարևան Զակամ գավառում լեզգիների ավերածությունների մասին իմանում ենք մի ձեռագիր հիշատակարանից. «139ա Թվին ՌՃԿԸ (1720)-ին, յուլիսի ԻԶ: Ով ընթերցող պարտ այս (=ես) հետեւիլ, եթէ զինչ կայ ի մէջ նորատիպ գրկիս. գրվեցաւ վերոյգրեալ թարըղումն Բլօվլկի էյլախումն, որ է Լազկին: Վեր էլ կացել Զագամայ օլքէն չափմիշ անէր, օղուրուշախ գերի անէր տանէր Լազկըստան - ծախէր... խանըն Մէհրալիխան էր. ոչ գնէր ղանշարըն: Շահին արզ արին, Շահ Սուլթան Հսուէյնին էր, իրան բուրմիշ արէց Լազկուն վերայ, վերչեն Աստուծոյ է գիտելի»[8]: Այստեղ հիշատակված Մեհրալի խանը, որը Վերին Զակամի և Միափոր գավառի կառավարիչն էր [9], նույնպես որևէ դիմադրություն չկազմակերպեց:

Լեզգիներին կանգնեցնելու համար պարսից շահը Երևանի ու Գանձակի բեկլարբեկերին հրամայեց նրանց դեմ արշավանք կազմակերպել: Միացյալ զորքերը, որոնց թիվը հասնում էր 30 հազարի, 1721 թ. աշնանը հասնելով Պարտավ՝ բանակ են դնում Կուր գետի ափին: Սակայն մինչ նրանք քնած էին, լեզգիները իրենց բնորոշ հանկարծակի հարձակումով փախուստի են մատնում միացյալ զորքերին[10]: Հաջորդ տարի լեզգիների զորախմբերը կրկին ավերում են Արցախը՝ ուղղություն վերցնելով դեպի Գանձակ: Գանձակցիներն օգնություն են խնդրում Քարթլիի Վախթանգ թագավորից, վերջինս էլ խոստանում է օգնել: Ամրանալով քաղաքում՝ Գանձակի բնակչությունը 20 օր դիմադրում է: Երբ Վախթանգ թագավորը 40-հազարանոց զորքով հասնում է Շամքոր, լեզգիները, թողնելով քաղաքի պաշարումը, հեռանում են: Հարկ է նշել որ այս զորաշարժը, կատարվելով հայկական բնակավայրերով, տեղական բնակչությանը բազմաթիվ նեղություններ էր պատճառում: Վախթանգն իր զորքով բանակում է Գանձակի հարավային մասում[11]: Գանձակում ու շրջակայքում բնակություն հաստատած սուննի մահմեդականներին համարելով

---

[1] Եսայի պատմիչ, էջ 51:

[2] Մելիքսեթ-Բեկ Լ., Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ Գ (ԺԸ-ԺԹ դդ.), Ե., 1955, էջ 68:

[3] Եսայի պատմիչ, էջ 51:

[4] Չամչյանց Մ.,Հայոց պատմություն, հ. Գ, Ե., 1984, էջ 784:

[5] Եսայի պատմիչ, էջ 52, Հմմտ. Վախուշտի, էջ 97:

[6] Вахушти Багратиони, История царства Грузинского, Тбилиси, 1976, с. 97. Վախուշտին նշում է, որ ավարն այնքան շատ էր, մեկ ուղտը նրանք վաճառում էին մոտ 4 ռուբլիով:

[7] Вахушти Багратиони, История царства Грузинского, Тбилиси, 1976, с. 97.

[8] Մայր Ցուցակ հայերեն ձեռագրաց, հ. Գ, կազմեց Օ. Եգանեան, Ե., 2007, էջ 434:

[9] Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր №3813, տող 496բ:

[10] Ջուլալյան Մ., Հայ ժողովրդի XIII-XVIII դարերի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների, գիրք Ա, Ե., 1990, էջ 193:

[11] Եսայի պատմիչ, էջ 60:

լեզգիների արշավանքների գրգռող՝ գանձակցիները հորդորում են Վախթանգին հալածել նրանց: Բացի այդ՝ բավականին մեծաքանակ զորքը պարենի ահագին պահանջարկ ուներ, և, հավանաբար, քաղաքի բնակչությունը չէր կամենում հանձն առնել այդչափ մեծաքանակ զորքի պարենավորման ծանր բեռը: Այս ամենի հետևանքով վրացական զորքերը սկսեցին տարածաշրջանի ավարառությունն ու կողոպուտը: Ավարառության են ենթարկվում Ձակամից Արցախ ընկած բնակավայրերը. «...Սփռեցան ի լերինս և ի ծորակս և յարձակ վայրս երկրի Ձակամու, Շամքորոյ, Գանջապասանու, Ոսկանապատու, Քուրաքչայու, և Պարտայու, մինչև ի Գուլստան գեղն և ի գետն Դրդու»[1]: Վրացական զորքն ասպատակում է ճանապարհին հանդիպած բոլոր բնակավայրերը՝ անկախ դրանց բնակչության էթնիկ պատկանելությունից: Փաստորեն, լեզգիների ավարառության մղձավանջը չավարտված՝ հյուսիսարևելյան Հայաստանի գավառները այս անգամ ենթարկվում էին արդեն վրացական զորքերի թալանին: Եսայի կաթողիկոսը, նկարագրելով այս սոսկալի դեպքերը, գրում է. «Եվ զայս ոչ թէ միայն յառաջ ասացեալ Մահմետականացն արարին ոչ. Այլ ընդ նոսին խառնեալ և զամենայն գաւառս Հայոց ի վերոյ գրեալ յերկրէն միահողոյն աւարիառին զշարժուն զան-շարժուն: Եվ զի լինէր երբեմն գունդ ինչ զօրացն Վրաց. դիմէին ի գեօղ ինչ քրիստոնէի, և նոքա քահանայիւք և ժողովրդօք ընդ առաջ լինէին նոցա խաչիւք, շուրջառօք, զանգակօք, և մոմեղինօք իբրև զքրիստոնէի: Իսկ վրացիքն ի վերայ անկեալ կողոպտէին զզգեստսն, և զեկեղեցին, զգիրք, և զամենայն անօթս. զարս և զկանայս, և զամենայն ինչս գեղջն մերկ ի մօրէ կողոպտեալ և աւարի առեալ գնային. և այսպես զամենայն գաւառս և զեկեղեցիս կող-մանցն Գանձակու աւեր և թափուր արարին յամենայն ընչից, և լցին զբանակս իւրեանց»[2]:

Վրացական զորքերը Գանձակում մնացին չորս ամիս: Այնուհետև Վախթանգը վերադարձավ Թիֆլիս՝ Գանձակում թողնելով փոքրաթիվ զորագունդ: Նրա հետ Թիֆլիս վերադարձավ նաև Եսայի կաթողիկոսը: Աղվանից կաթողիկոսն ու Վախթանգ թագավորը այդ ընթացքում օգնության ակնկալիքով ակտիվ նամակագրության մեջ էին ռուսական արքունիքի հետ[3]:

Այսպիսով, հյուսիսարևելյան Հայաստանը դարձել էր ռազմաքաղաքական բուռն գործընթացների թատերաբեմ: Օսմանյան Թուրքիան, տարբեր պատրվակներ որոնելով, պատրաստվում էր ներխուժել Արևելյան Հայաստան՝ ամեն կերպ փորձելով իր կողմը գրավել Վախթանգին: Պետրոս I ցարն էլ իր հերթին վրաց թագավորին հավաստիացնում էր, որ մտադիր է ազատագրել Վրաստանը իրանական տիրապետությունից: Վերջինս նաև խոստացավ արշավել և օգնել զորքով: Սեֆյան պետությունն իր հերթին ճիգեր էր գործադրում՝ պաշտպանելու պետության ամբողջականությունը: Այս ամենը հաշվի առնելով՝ Սուլթան Հուսեին շահը Վախթանգի տրամադրության տակ դրեց Ատրպատականի ու Գանձակի ամբողջ զորքերը՝ հրամայելով շարժվել Գանձակ. «և պահ կալեալ զգուշացիս կողմանցդ այդեցիկ. ի թշնամեաց մերոց»[4]: Պետք է կարծել, որ շահը, թշնամի ասելով, նկատի ուներ ոչ միայն լեզգիներին, այլ նաև ռուսներին, որոնք արդեն անթաքույց ծավալվում էին դեպի Կասպից ծովի եզերք՝ նպատակ ունենալով նվաճել Այսրկովկասը: Վախթանգ թագավորին ուղղված նամակում Պետրոս I-ը հորդորում էր 1722 թ. աշնանը զորքով սպասել Շամախիում, ուր, ըստ նախնական ծրագրի, պետք է նրանց միանար ինքը՝ ռուսական բանակով:

Վախթանգը զորքով ուղղություն վերցրեց դեպի Գանձակ, իսկ Թիֆլիսում գտնվող Եսայի կաթողիկոսը նրանից ավելի վաղ անցավ Ղարաբաղ, որտեղ մելիքների հետ համատեղ կազմակերպեց մոտ 10-հազարանոց մի զորագունդ և շարժվեց վրացական զորքին ընդառաջ: Կողմերը հավատացած էին, թե Պետրոս I-ի զորքերը շուտով իրենց են միանալու, և մոտեցել է քրիստոնյաների ազատագրման ժամը[5]: Վրաց-հայկական միացյալ զորքերը 25 օր սպասեցին ռուսական բանակին, սակայն լուր առան, թե Պետրոսը, Դերբենտը գրավելով, հետ է վերադարձել:

Ավելորդ չէ նաև նշել, որ Վախթանգը բավական ծանր կացության մեջ էր հայտնվել: Ղազախի, Բորչալուի[6], Գանձակի, Երևանի և շրջակայքի մանր մահմեդական ավագանին

---

[1] Եսայի պատմիչ, էջ 61:

[2] Նույն տեղում:

[3] Эзов Г. А., Сношения Петра Великаго с армянским народом, документы, Санкт Петербург, 1898, с. 332, документ № 213.

[4] Եսայի պատմիչ, էջ 64:

[5] Նույն տեղում, էջ 66:

[6] Ղազախը ներառում էր Աղստևի հովիտը, անունը ստացել է ղազախլու ցեղից: Բորչալուն ևս նույնանուն ցեղի անունից է առաջացել, համապատասխանում է Լոռու գավառի մեծագույն մասին՝ հարավ-արևելքից

Վախթանգի դեմ դավեր էր նյութում: Այս ամենի գլուխ է կանգնում Կախեթի կրոնափոխ իշխող Կոստանդինը, որը ստացել էր Մահմադ Կուլի անունը[1]: Վերջինս Սուլթան Հուսեինին հաջորդած Թահմազ շահին նամակով հայտնում է, որ Վախթանգը հայերի հետ միասին խռովություն է բարձրացրել և ցանկանում է ռուսների հետ դաշնակցել: Թահմազը հրովարտակով Մահմադ Կուլի խանին է հանձնում տարածաշրջանի զորքերի հրամանատարությունը և պատվիրում սպանել Վախթանգին[2]: Տարածաշրջանը կրկին պատերազմական գործողությունների թատերաբեմի է վերածվում: Հատկանշական է, որ Վախթանգի զորքի մեջ հայ մարտիկները բավականին մեծ թիվ էին կազմում: Վճռական ճակատամարտը տեղի է ունենում Ղազախում դեկտեմբերին: Մահմադ Կուլի խանը, պարտություն կրելով, փախչում է Կախեթ, որտեղ կապ է հաստատում լեզգիների հետ՝ ակնկալելով նրանց օգնությունը Վախթանգի դեմ պայքարում: Փոխարենը նա լեզգիներին խոստանում է Թիֆլիսի ողջ ավարը: Լեզգիները հոժարությամբ համաձայնում են և ասպատակելով տարածաշրջանը՝ պաշարում Թիֆլիսը: Նրանց են միանում նաև Գանձակի ու Երևանի խաները իրենց զորքերով[3]: Վախթանգը, հաշվի առնելով ուժերի անհավասարությունը, քաղաքը հանձնում է՝ հեռանալով դեպի հյուսիս: Թիֆլիսն ավերվում ու թալանվում է, իսկ բնակչության մեծ մասը՝ գերեվարվում:

Ինչպես նշվեց, Օսմանյան Թուրքիան նույնպես հետևում էր Սեֆյան տերության շուրջ կատարվող գործընթացներին՝ սպասելով հարձակման պատեհ առիթի: Այս ամենից ելնելով՝ թուրքական կողմը հրահրում էր լեզգիներին կատարել նորանոր արշավանքներ՝ նպատակ ունենալով էլ ավելի արագացնել Իրանի կործանումը և իրենց հետագա արշավանքի համար բարենպաստ պայմաններ ստեղծել:

Պահը հասունացած համարելով՝ թուրքական զորքերը 1723 թ. ամռանը ներխուժեցին Վրաստան և գրեթե առանց դիմադրության գրավեցին Թիֆլիսը: Մեհմեդ Կուլի խանը ստիպված հեռացավ դեպի Ղազախ-Շամշադինի[4] կողմ[5], որտեղ նա՝ որպես Իրանի բեկլարբեկ, տեղական խաների հետ շարունակում էր պայքարը թուրքերի դեմ: Կրկին ռազմական գործողությունները ծավալվում էին Հայաստանի հյուսիսարևելյան շրջաններում: Այստեղ ժամանակավոր անիշխանությունը ծանր հետևանքների էր հանգեցրել՝ խաթարելով բնակչության բնականոն գործունեությունը: Լեզգիների արշավանքներին հաջորդած իրադարձությունների հետևանքով տեղական խաները, որոնք պատսպարվել էին անմատչելի վայրերում, կրկին ստանձնել էին գավառների իշխանությունը և օգտվելով Սեֆյան տերության ճգնաժամից՝ լիակատար անկախ էին: Նրանք նաև հմտորեն օգտագործում էին Վախթանգի և Մահմադ Կուլի խանի հակասությունները: Հայկական զինական ուժերը ձախողված ռուսական արշավանքից հետո հաջողությամբ սկսեցին դիմագրավել մահմեդական տեղական իշխողներին: Սա ավելի կազմակերպված բնույթ ուներ Արցախում:

Վերահաս թուրքական նվաճման հեռանկարը չէր հրապուրում նաև տեղական մահմեդական ավագանուն, որի ներկայացուցիչները, լինելով իրանական ծայրագավառների փաստացի իշխողներ, սովոր էին լայն արտոնությունների: Հավանաբար հենց այդ պատճառով էլ նրանք միացան Մահմեդ Կուլի խանին և հաջողությամբ դիմագրավեցին Գանձակ արշավող թուրքական զորքերին: Բացի այդ՝ անգամ թուրքական աղբյուրներն են վկայում, որ կարճ ժամանակամիջոցում տիրելով Թիֆլիսին ու Վրաստանի մեծագույն մասին՝ թուրքական զորքերն աչքի էին ընկել բազմաթիվ դաժանություններով[6]: Տեղի հայ բնակչությունը նույնպես մասնակցեց թուրքական զորքերի դեմ մարտերին: Միացյալ ուժերով վերջիններս կարողացան ջախջախել Գանձակը պաշարած թուրքական զորքերին և նրանց օգնության շտապող լեզգիներին փախուստի մատնել: Նշենք նաև, որ պաշարվածները դեռևս հույսեր էին կապում ռուսական զորքերի հետ, որոնք գտնվում էին

սահմանակցելով Ղազախին: 18-րդ դարից սկսած՝ այս տեղանունները սկսեցին լայնորեն կիրառվել՝ դուրս մղելով նախկինում կիրառվող տարբերակները:

[1] Մահմադ Կուլին, շահի կողմից նշանակվելով Կախեթի թագավոր, նրանից ստանում է Բորչալուն, Ղազախը, Երևանը և 1723 թ. գալիս ու հաստատվում է Ղազախում: Տե՛ս Վախուշտի, նշվ. աշխ., էջ 97:

[2] Եսայի պատմիչ էջ 66:

[3] Մելիքսեթ-Բեկ Լ., Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ Գ, էջ 65:

[4] Շամշադին տեղանունը նույնպես առաջացել է համանուն ցեղի անունից և համապատասխանում է Տավուշ գավառի տարածքին: Ինչպես Ղազախը և Բորչալուն, այն նույնպես որպես տեղանուն սկսել է շրջանառվել 18-րդ դարասկզբից:

[5] Մելիքսեթ-Բեկ Լ., Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ Գ, էջ 69:

[6] Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, կազմեց Ա. Սաֆրաստյան, հ. Ա, Ե., 1961, էջ 136:

Բաքվում, սակայն որևէ օգնություն չստացվեց[1]: 20-օրյա անհաջող պաշարումից հետո թուրքերը, մեծ կորուստներ կրելով, թողեցին Գանձակը և վերադարձան Թիֆլիս[2]: Նրանց հաջողվեց միայն գրավել հայկական թաղամասը: Այն հիմնովին թալանվեց, բնակչության մի մասը կոտորվեց, մի մասը գերի տարվեց, մի մասն էլ ապաստանեց Արցախի սղնախներում: Դեպքերի ականատես Ալեքսան քահանան, Դերբենդի ռուսական զորքերի գնդապետ Յունգերին հղած 1723 թ. դեկտեմբերի 20-ով թվագրված նամակում համառոտ շարադրելով իրավիճակը, գրում է. «ԿՌ (60000) մարդօվ եկին Գանջու վերա: ԻԲ (12) փաշայ ին, թոփ ղունբարայ շադ ունին, քաղաքի մինչև ի կէսըն առին, մեր Հայոց ազգին ողճ ապրանքըն թալանէցին, որն կոտէրէցին, որն կերի դանում: Որ փող ունէր՝ գնաց իւր էրէխէքըն առին: Կ (60) դուն քշէցին, դարան Հօռմաս դուն, մնացեալն փախըսդական, մերկ, պոպիկ գնացին Հայոց Սղնանն: Այս է մեր Հայոց հալն, Լազկի ասկըն ինչպէս ձեռ վեր կառնու այս երկրէ»[3]: Գանձակից գերեվարված բնակչությամբ թուրքերը չեն բավարարվում: Նրանք, դեպի Վրաստան նահանջի ճանապարհին ավերելով հայկական բնակավայրերը, ևս 3000 հայերի գաղթեցնում են Թիֆլիս[4]: Տարածաշրջանի բնակավայրերի վրա խիստ բացասաբար ազդեցություն ունեցան թուրքերի ու տեղական ցեղապետերի հետագա ընդհարումները: Հյուսիսարևելյան Հայաստանի Աղստև գետի ստորին հովտում բնակություն հաստատած ղազախլու ցեղը, ինչպես նաև Զակամ գավառում հաստատված շամսադինլուներն ասպատակում էին թուրքական տիրապետությանը անցած որոշ գյուղեր: Ի պատասխան դրան՝ թուրքերը ձեռնարկում են պատժիչ գործողություններ[5]:

Հյուսիսարևելյան Հայաստանի ու Արցախի բնակչության համար կարևոր էր իրանական կողմնորոշումը պահպանած տեղական ղաջարական ցեղի ֆեոդալական ավագանու հետ կնքված 1724 թ. մարտի համաձայնագիրը: Վերջին իրադարձությունները ղաջար ցեղապետերին ստիպել էին փոխել վերաբերմունքը հայկական բնակչության նկատմամբ: Դրա շնորհիվ, ի դեմս հայերի, նրանք վստահելի դաշնակից ստացան թուրքերի դեմ հետագա պայքարում: Կողմերը պարտավորվում էին փոխադարձ թշնամական գործողություններ չիրականացնել և միասնաբար գործել երկրամաս ծավալվող թուրքերի դեմ[6]: Կողմերից մեկի վրա լեզգիների հարձակման դեպքում նույնպես մյուս կողմը պարտավորվում էր օգնության հասնել[7]: Վերջիններս դեռևս հույսեր էին կապում սպասվող ռուսական արշավանքի հետ: Ռուսական կողմը 1724 թ. հունիսին պայմանագիր կնքեց թուրքերի հետ, որով պահպանեց միայն Կասպից ծովի առափնյա շրջանները, իսկ Վրաստանը, Հայաստանը, և, փաստորեն, Իրանին ենթակա հյուսիսային շրջանները ճանաչեց թուրքական ազդեցության գոտի: Թուրքական կողմը նոր թափով ձեռնամուխ եղավ նշված տարածքների գրավմանը: Օսմանյան զորքերը 1724 թ. օգոստոսին գրավեցին Նախիջևանը, այնուհետև՝ Երևանը: Դեռևս 1724 թ. չկարողանալով գրավել Հյուսիսարևելյան Հայաստանը և հանդիպելով դիմադրության՝ նրանք հաջորդ տարի ի վերջո գրավեցին Ղազախը, Շամշադինը և Լոռի-Բորչալուն[8]: Նույն տարվա հոկտեմբերին մեծաքանակ ուժերով երկօրյա մարտերից հետո տիրեցին նաև Գանձակին[9]:

Թուրքական զորքերին երկարատև դիմադրեցին Սյունիքի ու Արցախի մարտիկները: Արցախում դեռևս սպասելով ռուսական զորքերի գալստյանը՝ տեղական մելիքներն ու Եսայի կաթողիկոսը հաջող դիմադրություն կազմակերպեցին:

Թուրքական արշավանքն ու նվաճումները ծանր հետևանքներ ունեցան: Հայ բնակչության մի զգալի մասը գերի տարվեց և որպես ստրուկ վաճառվում էր Կոստանդնուպոլսում[10]: Ավելի ծանր էր վիճակը հյուսիսարևելյան Հայաստանում, քանի որ այն պարբերաբար ենթարկվում էր լեզգիների ավերիչ արշավանքներին՝ չհաշված տեղական մահմեդական տիրակալների ճնշումները: Ռուսական զորքերի օգնության վրա

---

[1] Տե՛ս Армяно-русские отношения в первой трети XVIII века, Сборник документов, том II, часть II, с. 45:

[2] Նույն տեղում, էջ 48:

[3] Армяно-русские отношения в первой трети XVIII века, Сборник документов, том II, часть II, с. 53.

[4] Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հ. Ա, էջ 138:

[5] Նույն տեղում, էջ 139:

[6] Պայմանագիրը մանրամասն տե՛ս Ա. Աբրահամյան, Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից, Ե., 1953, էջ 102:

[7] Վավերագրեր հայ-պարսկական յարաբերութեանց մասին, ընդօրինակեց, տառադարձեց և թարգմանեց Հ. Աճառյանը, Ե., 1927, էջ 77:

[8] Աբրահամյան Ա., նշվ., աշխ., էջ 114:

[9] Նույն տեղում, էջ 118:

[10] Չամչյանց Մ., Հայոց պատմություն, հ Գ, Ե., 1984, էջ 783:

հույսը դրած՝ հայկական ու վրացական բնակչությունը, փաստորեն, ծանր կորուստներ ունեցավ: Հեռահար նպատակներ ունենալով և ցանկանալով կայսրության հարավը բնակեցնել՝ ցարը առաջարկում է հայ և վրացի բնակչությանը տեղափոխվել Ռուսական կայսրություն: Այս առաջարկի արդարացումը թուրքական կողմին ռուսները բացատրվում էին հետևյալ կերպ. հայերի՝ նշված տարածքներից հեռանալու հանգամանքը ավելի դյուրին կդարձնի տարածաշրջանի նվաճումը թուրքերի կողմից[1]:

Այսպիսով, XVII դարավերջից սկսված Սեֆյան Իրանի անկումը նախանշեց մի շարք իրադարձություններ, որոնք քայքայիչ ազդեցություն ունեցան հյուսիսարևելյան Հայաստանի համար: Պետության դատարկված գանձարանը լցնելու համար շահ Սուլթան Հուսեինի դաժան հարկային մեթոդները մեծ հարված հասցրին տնտեսական կյանքին: Իրանում ծայր առած ապստամբություններից ու կենտրոնական իշխանության թուլացումից շտապեցին օգտվել Թուրքիան և հզորացող Ռուսաստանը: Այս ամենին ավելացան Թուրքիայի դրդմամբ լեզգիների հարձակումները: Լեռնականների անընդմեջ հարձակումներից հսկայական վնասներ կրեցին հատկապես հյուսիսարևելյան Հայաստանի բնակավայրերը: Դրանք թալանվեցին, իսկ բնակչությունը գերի տարվեց կամ կոտորվեց: Այս ամենի հետևանքով տարածաշրջանում նվազեց հայկական բնակչությունը, ինչի բացասական ազդեցությունը զգացվեց հետագա տարիներին: Լքված հայկական գյուղատեղիների մի մասն անցավ արդեն նստակեցության անցնող մահմեդական քոչվոր ցեղերին: Լեզգիների հարձակումները, պարբերաբար կրկնվելով, ծանր հետևանքների էին հանգեցնում: Հյուսիսարևելյան Հայաստանի գավառները, որոնց բնակչությունը նախքան այդ բավականին ստվարացել էր, ժողովրդագրական աղետի եզրին հայտնվեցին: Բնակչության մի մասը սկսեց հեռանալ ապահով վայրեր, մի մասը գերի ընկնավ, մի մասն էլ սպանվեց: Ծանր հարված ստացան նաև տարածաշրջանի հոգևոր կենտրոնները: Նախորդ դարում նորոգված, ինչպես նաև նոր կառուցված հոգևոր կենտրոններն ամայացվեցին, իսկ միաբանների մեծամասնությունը կոտորվեցին: Մարտիրոս անունով մի սարկավագ, իր ընդօրինակած ժողովածուի հիշատակարանում նկարագրելով Հայաստանին չորս կողմից պատուհասած աղետները, գրում է. «...և ի հիւսիսային կողմէն Լակզին, որ էր Օզբէկ, որ ազգս Հայոց բազում գերեաց և զեկեղեցիս քակեաց, որ յոյժ դահիճ էր ազգաց քրիստոնէից և զբազումս ի վարդապետաց սպանին և զբազումս կիսամահ արարին...»[2]: Հյուսիսարևելյան Հայաստանի հոգևոր կենտրոններից հռչակավոր Չարեքի անապատը, որտեղ իրենց արդյունաշատ գործունեությունն էին ծավալում շուրջ հարյուր միաբաններ, լեզգիների կողմից ավերվեց: Անապատի հոգևորականներից շատ քչերին հաջողվեց փրկվել: Չարեքի գործունեությունը վերականգնելու նպատակով հետագայում աթոռակալած մի քանի կաթողիկոսներ ջանքեր էին գործադրում վերականգնելու անապատի նախկին փառքը[3]: Այնուհանդերձ, չնայած գործադրված ճիգերին՝ անապատի գործունեությունը նախկինի հետ համեմատելի չէր[4], ինչը կարելի է բացատրել նաև շրջակայքի հայ բնակչության թվաքանակի նվազմամբ: Շատ այլ վանքեր ու եկեղեցիներ արժանացան Չարեքի ճակատագրին:

Հայկական բնակչության, հատկապես ավագանու՝ ռուսական զորքերի օգնության հետ կապված անտեղի հույսերը ևս ունեցան իրենց վատ անդրադարձը: Արդյունքում հայ բնակչությունը միայն վաստակեց տեղական մահմեդականների ու թուրքերի էլ ավելի ընդգծված թշնամական վերաբերմունքը: Լեզգիների արշավանքներից ամայացող տարածքը ենթարկվեց նաև Գանձակում տեղակայված վրացական զորքերի թալանին: Տարածաշրջանը գրեթե երկու տասնամյակ դարձավ ռազմական գործողությունների և զորաշարժերի մշտական վայր ինչպես պարսկական, թուրքական ու վրացական, այնպես էլ լեզգիական զորքերի համար:

Андраник Есаян, СИТУАЦИЯ В СЕВЕРО-ВОСТОЧНОЙ АРМЕНИИ В ПЕРВОЙ ЧЕТВЕРТИ 18 ВЕКА. После персидско-османских войн 30-х годов 17 века на северо-востоке Армении создалась благоприятная ситуация для мирного строительства и экономического развития. В результате, из других мест Армении здесь была замечена определенная иммиграция населения. Активировалась деятельность разрушенных

[1] Չոբանյան Պ., հայ-ռուս-վրացական փոխհարաբերությունները ԺԸ դարի երկրորդ կեսին, էջմիածին, 2006, էջ 7:

[2] «Արարատ» ամսագիր, 1888, № Ա, էջ 32:

[3] Կարապետյան Ս., նշվ. աշխ., էջ 104:

[4] «Արձագանք», 1886, № 23, էջ 331:

духовных учреждений. Былы построены новые монастыри и духовные центры. Все изменилось, когда к концу века Сефевидская госсударство начала ослабеть. Для предотвращения разрушения державы персидский дворец установил более жесткие налоги, что сделало более невыносимым состояние населения. Поспешили воспользоваться возможностью претендуюшие на иранские территории Турция и Россия. Параллельно по подстрекательству турок населенные пункты северо-восточной Армении, которые входили в состав Ирана, начали ограбить лезгини. Войска горцев периодически пересекали Кур и опустошали населенные пункты армян. Османская Империя, согласовано с российской стороной, в 1725 году смог оккупировать весь регион. Упомянутые события оказали огромное влияние на демографическую ситуацию в регионе, последствия которого ощущались в последующие годы.

Ключевые слова: Северо-Восточная Армения, Закам, Тавуш, лезгины, Гандзак, Сефевидская Персия, Казах, Шамшадин, Чарек, Вахтанг.

Andranik Yesayan, THE SITUATION IN NORTHEASTERN ARMENIA IN THE FIRST QUARTER OF THE 18-TH CENTURY. After the Persian-Ottoman Wars from the 30s of the 17th century a favorable environment for peaceful construction and economic development was created in Northeast Armenia. As a result, some population immigration was observed here from other provinces of Armenia.. New monasteries and churches were built in the region. Situation changed when the Sefevids began to weaken in the latter part of the century. For the preventation the destruction of empire the Safavid government imposed heavier taxes, which made the lives of the population unbearable. Turkey and Russia begun to take advantage of the opportunity. In parallel the settlements of northeastern Armenia began to be plundered by lezgins. Their troops regularly crossed the Kur River and destroyed the Armenian settlements. This actions were inspired by Turkey, as well they wanted to made their further invasion easier. The Ottoman Empire, agreed with the Russian side, was able to occupy the entire region in 1725. These events made a huge difference to the demographic image of the region.

Key words: Northeastern Armenia, Zakam, Tavush, lezgines, Gandzak, Safavid Persia, Kazax, Shamshadin, Charek, Vakhtang.

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА

АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE

JOURNAL OF ARMENIAN STUDIES

2021, № 2

Գլխավոր խմբագիր՝ Էդիկ Մինասյան

Խմբագիր՝ Միքայել Մալխասյան

Տեխնիկական խմբագիր՝ Տիգրան Ղանալանյան
Սրբագրումը՝ Մերի Հովհաննիսյանի
Համակարգչային ձևավորումը՝ Միքայել Մալխասյանի

Հասցեն՝ 0025, Երևան, Աբովյան 52
Адрес-0025, Ереван, ул. Абовяна 52
Address: 0025, Yerevan, Abovyan 52
E-mail: histcultjournal@gmail.com
tel: 060-71-06-00, 055-92-88-00

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1
«Մեկնարկ» ՍՊԸ տպարան, Երևան, Աբովյան 41

Издательство ЕГУ, Ереван, ул. Ал. Манукян 1
Типография ООО “Мекнарк”, Ереван, ул. Абовяна 41

Տպաքանակը՝ 300